

ՍԱՂՄՈՍ 99

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Իսրայելի հանդեպ հավատարմության համար Աստծուն փառաբանությունն <u>MT ներածությունն չկա</u>	Փառք Աստծուն Իր սրբության համար	Աստծո թագավորությունը տոնակատարող օրհներգ	Աստված գերագույն թագավորը	Աստված արդար և սուրբ թագավորը
99:1-5	99:1-3	99:1-5	99:1-3	99:1-2ա 99:2բ-3բ 99:3գ-ե
	99:4-5		99:4-5	99:4 99:5
99:6-9	99:6-7	99:6-7	99:6-7	99:6 99:7
	99:8-9	99:8-9	99:8-9	99:8 99:9

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՄԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը մեծարում է ՅԱՀՎԵԻ թագավորությունը (տես՝ Սաղմ. 93:1, 96:10, 97:1, տես առցանց Սաղմ. 97:1-ի ամբողջական գրառումը): Անգամ Սաղմ. 99:4 կարող էր և հավանաբար վերաբերում է ՅԱՀՎԵԻՆ (այսինքն՝ Հզոր թագավորը): ՅԱՀՎԵՆ Իսրայելի իրական թագավորն է (տես՝ 1 Թագ. 8:7, Սաղմ. 47:3, 48:2, 95:3):

Բ. Այս Սաղմոսը արտացոլում է՝

1. անապատում դեզերելու շրջանը՝
 - ա. տապանակը (Սաղմ. 99:1բ, 5բ, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԸ)
 - բ. Մովսեսին և Ահարոնին (Սաղմ. 99:6ա)
 - գ. ամպի սյունը (Սաղմ. 99:7ա, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՇԵՄԻՆԱ)
 - դ. Սինայում օրենքի տրվելը (Սաղմ. 99:7բ,գ)
 - ե. ներումը (Սաղմ. 99:8, տես՝ ԹՎՈԳ 14:20)
2. սկզբնական միացյալ միապետությունը (տես՝ Սաղմ. 99:6բ, այսինքն՝ Սամուելը)
3. Երուսաղեմում տաճարը
 - ա. Սիոնում (Սաղմ. 99:2ա, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . Սիոն)
 - բ. Նրա սուրբ լեռը (Սաղմ. 99:9բ)

Գ. Սաղմոս 99:8 աստվածաբանական կարևոր համար է: Այն արտացոլում է գույգ, անբաժանելի ճշմարտություններ՝

1. ՅԱՀՎԵԻ ողորմած, համբերատար բնավորության մասին
2. մարդու լսելու և հնազանդվելու պատասխանատվության մասին (տես՝ Ելից 34:6-7)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՈՒԽՏ
ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՊԱՀԵԼ

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 99:1-5

- ¹ՏԵՐՆ Է թագավորում . ժողովուրդները թող դողդողան :
- Նա նստում է քերովբեների միջև , երկիրը թող շարժվի :
- ²ՏԵՐԸ մեծ է Սիոնում ու բարձր է բոլոր ժողովուրդների վրա :
- ³Թող փառաբանեն Բո մեծ ու ահավոր անունը . այն սուրբ է :
- ⁴Թագավորի գորությունը իրավունք է սիրում :
- Դու ուղղություն ես հաստատում ,
- Դու իրավունք ու արդարություն ես անում Հակոբի մեջ :
- ⁵Մեծարեցե՛ք ՏԻՐՈՋԸ՝ մեր Աստծուն
- Ու երկրպագեցե՛ք Նրա ոտքերի պատվանդանին . Նա սուրբ է :

99:1 «ՏԵՐՆ Է թագավորում» Տես Սաղմ. 97:1-ի ամբողջական գրառումը: Բոլորը ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ են, որոնք խոսում են ավարտված գործողությունների մասին, սակայն, երբայերեն ԲԱՅԵՐԻ ժամանակի տարրը պետք է որոշել համատեքստից:

❖ **«ժողովուրդները թող դողդողան»** Այս ԲԱՅԸ (BDB 919, KB 1182, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՏԱԿԱՆ իմաստով) համազոր է «թող երկիրը դողա» խոսքին (BDB 630, KB 680, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՏԱԿԱՆ իմաստով. այս բառը [BDB 630, KB 680] ՀԿ-ում միայն այստեղ կարելի է գտնել): Դրանք միասին կազմում են մեկ այլ ընդհանրական շեշտադրություն: Այստեղ արտացոլում է ՅԱՀՎԵԻ արդարությունը (տես՝ Սաղմ. 99:4):

❖ **«Նա նստում է քերովբեների միջև»** ԲԱՅԸ (BDB 442, KB 444, *Qal* ԴԵՐԲԱՅ) նշանակում է «նստում է Իր գահի վրա» (տես՝ 1 Թագ. 4:4, 2 Թագ. 6:2, 4 Թագ. 19:15, 1 Մնաց. 13:6, Սաղմ. 80:1, Ես . 37:16): «Քերովբեներ» խոսքի կիրառությունը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՔԵՐՈՎԲԵՆԵՐ) այս արտահայտությունը նմանեցնում է Ելից 25:22-ին: Տապանակը ՅԱՀՎԵԻ ներկայության համար երկրավոր մի վայր էր (այսինքն՝ «ոտքերի պատվանդան», Սաղմ. 99:15բ, 1 Մնաց. 28:2. երկրագունդը կոչվում է ՅԱՀՎԵԻ ոտքերի պատվանդան Եսայի 66:1-ում, տաճարը կոչվում է Նրա ոտքերի պատվանդանը Սաղմ. 132:7, Ողբ 2:1-ում): Նա բնակվում էր *քերովբեների* թևերի միջև՝ ողորմության

աթոռի վրա (այսինքն՝ տապանակի ծածկոցը): Այս հատուկ վայրը (այսինքն՝ Սրբության Սրբոցում տապանակի վրա) այն տեղն էր, որտեղ հանդիպում էին երկինքն ու երկիրը՝ տեսանելի և անտեսանելի աշխարհները:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ԱԹՈՌ

99:2 «ՏԵՐԸ (ՅԱՀՎԵՆ) մեծ է Սիոնում» Այս ԱԾԱԿԱՆԸ (BDB 152) հաճախ է կիրառվում ՅԱՀՎԵՆ համար:

1. Նրա անձի համար – 2 Օրինաց 7:21, Նեեմ. 1:5, 8:6, 9:32, Սաղմ. 86:10, 145:3, 147:5, Ես. 12:6, Երեմ. 10:6, 32:18, Դան. 9:4
2. Նրա անվան համար – Հեսու 7:9, 1 Թագ. 12:22, 3 Թագ. 8:42, 2 Մնաց. 6:32, Սաղմ. 76:1, 99:3, Երեմ. 10:6, 44:26, Եզեկ. 36:23, Մաղ. 1:11
3. Նրա գործերի համար – 2 Օր. 11:7, Դատ. 2:7, Սաղմ. 111:2
4. Նրա փառքի համար – Սաղմ. 21:5, 138:5
5. Նրա ողորմության համար (*hesed*) – 3 Թագ. 3:6, 2 Մնաց. 1:8, Սաղմ. 5:10, 86:13, 108:4
6. Նրա բարության համար – Նեեմ. 9:25
7. Նրա գթառատության համար – Եսայի 54:7
8. ավելի մեծ է, քան բոլոր աստվածները – Ելից 18:11, 2 Օր. 10:17, 1 Մնաց. 16:25, 2 Մնաց. 2:5, Սաղմ. 77:13, 95:3, 96:4, 135:5

ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 152) ՅԱՀՎԵՆ համար կիրառվում է նաև 2 Օր. 3:24, 5:24, 9:26, 11:2, 32:3, Սաղմ. 105:2-ում:

AB առաջարկում է, որ Սաղմ. 99:2-ում համեմատական ՆԱԽԴԻՐԸ (KB 825) մատնանշում է հավանական համեմատական 99:2ա-ում, որը ցույց է տալիս ՅԱՀՎԵՆ մեծությունը Իսրայելի, Հուդայի վրա, ինչպես որ «բոլոր ժողովուրդների» վրա է (Էջ՝ 368): Կարծում եմ, եթե սա լավագույնս է համապատասխանում զուգահեռ տարբերակին, ապա Իսրայելը առաջինն է, սակայն ոչ միակը (տես՝ Սաղթ. 28:18-20, Դուկ. 24:46-48, Գործք 1:8, Հռոմ. 1:16):

❖ **«բարձր է բոլոր ժողովուրդների վրա»** Այս արտահայտությունը ակնարկում է, որ ՅԱՀՎԵՆ մեծարված է (BDB 926, KB 1202, *Qal* ԴԵՐԲԱՅ) ազգերի բոլոր աստվածների վրա (այսինքն՝ նրանց կուռքերի, տես՝ Սաղմ. 97:9, 113:4, նաև նկատե՛ք՝ Ելից 18:11, 2 Օրինաց 10:17, 1 Մնաց. 16:25, 2 Մնաց. 2:5, Սաղմ. 77:13, 95:3, 96:4, 135:5):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Գ.

99:3 «Թող փառաբանեն Քո մեծ ու ահավոր անունը» Մա երրորդ ԱՆԿԱՏԱՐՆ է, որը կիրառվել է ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով (տես՝ Սաղմ. 99:1ա,բ):

ՅԱՀՎԵՆ «մեծ անվան» համար տե՛ս Սաղմ. 99:2-ի գրառումը:

ՅԱՀՎԵՆ «ահավոր» անունը «վախենալ» կամ «ակնածել» ԲԱՅԻց է (BDB 431, KB 432, *Niphal* ԴԵՐԲԱՅ): Այն հաճախ է կիրառվում ՅԱՀՎԵՆ համար (տես՝ 2 Օր. 7:21, 10:17,21, 28:58, Սաղմ. 111:9, Մաղ. 1:14):

«Մեծ» և «ահավոր» բառերը հաճախ կիրառվում են միասին, որպեսզի բնութագրեն ՅԱՀՎԵՆ (տես՝ Նեմմ. 1:5, 4:8, 9:32, Դան. 9:4):

«Նրանք»-ը վերաբերում է բոլոր ոչ իսրայելացիներին (այսինքն՝ «ժողովուրդներին», Սաղմ. 99:1ա, «երկիրը»՝ Սաղմ. 99:1ա, «բոլոր ժողովուրդները»՝ Սաղմ. 99:2բ):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵՆ «ԱՆՈՒՆԸ»

❖ «Նա սուրբ է» Նկատե՛ք, որ սա կրկնվում է Սաղմ.99:5գ և ակնարկվում է 99:9գ-ում, որը դիտավորյալ զուգահեռի նման է:

«Սուրբ» բառը պարբերաբար կրկնվող թեմա է (տես՝ Ղևտ. 19:2, 20:7,26, Հեսու 24:19, 1 Թագ. 2:22, Եսայի 6:3): Նկատե՛ք, որ այն կրկնվում է հ. 3-ում և դարձյալ՝ հհ. 5 և 9-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲԸ

99:4 Կարծում եմ այս համարը վերաբերում է հենց ՅԱՀՎԵԻՆ (տես՝ Համատեքստային Հասկացու-թյուններ, Ա): Նկատե՛ք, թե ինչպես է Նրա թագավորությունը (Սաղմ. 99:1) բնութագրվում:

1. սիրում է (BDB 12, KB 17, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) իրավունք (BDB 1048)
2. հաստատում է (BDB 465, KB 464, *Polel* ՎԱՂԱԿԱՏԱՐ) ուղղություն (բառացի՝ շիտակություն, BDB 449)
3. իրավունք (BDB 1048) և արդարություն (BDB 842, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ) ես անում (BDB 793, KB 889, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ)

Նկատե՛ք, որ բոլոր երեքն էլ ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ են, սակայն NASB, NJB և NKJV տարբերակները առաջինը թարգմանում են որպես ՆԵՐԿԱ և հաջորդ երկուսը՝ որպես ԱՆՅՅԱԼ: Ժամանակի տարրը երբայերեն ԲԱՅԵՐԻ դեպքում պետք է որոշվի ըստ համատեքստի: Հետևաբար, արդյո՞ք այս խոսքերը նկարագրում են, թե ով է ՅԱՀՎԵՆ, թե՞ ինչ է Նա անելու:

«Արդարություն» և «իրավունք» տերմինները հաճախ են միասին կիրառվում՝ նկարագրելու թագավորների ճիշտ թագավորելը:

1. ՅԱՀՎԵՆ Ինքը – Սաղմ. 99:4, Եսայի 33:5, Երեմ. 4:2, 9:24
2. Դավիթը – 1 Մնաց. 18:14
3. Սողոմոնը – 3 Թագ. 10:9, 2 Մնաց. 9:8
4. Հուդայի թագավորները – Երեմ. 22:3,15, Եզեկ. 45:9
5. Իսրայելի թագավորները – Ամովս 5:9,24
6. Մեսիան (այսինքն՝ Դավթի ճյուղը) – Եսայի 9:7, 32:1, 16, 59:9,14, Երեմ. 33:15

99:5 «մեծարեցե՛ք ՏԻՐՈՉԸ՝ մեր Աստծուն» Սա երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻՑ առաջինն է, որը փակում է առաջին պարբերությունը:

1. մեծարեցե՛ք – BDB 926, KB 1202, *Polel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, նույն ԲԱՅԸ կիրառվում է Սաղմ. 99:2բ-ում
2. երկրպագեցե՛ք (բառացի՝ «խոնարհվեցե՛ք») – BDB 1005, KB 295, *Hishtaphel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 132:7

Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես է ուխտի ամբողջական անունը՝ «ՏԵՐԸ՝ մեր Աստվածը» (բառացի՝ ՅԱՀՎԵ *Elohim*, տես՝ Ծննդ. 2:4, Ելից 20:2) կրկնվում և ս երեք անգամ Սաղմ. 99:8ա, 9ա,գ-ում: ՅԱՀՎԵՆ առանձնահատուկ կերպով կապված է Աբրահամի սերունդների հետ՝

1. Սիոնում, Սաղմ. 99:2 (այսինքն՝ տանարը)
2. Հակոբի մեջ, Սաղմ. 99:4գ (այսինքն՝ Իսրայելում)
3. Մովսեսի և Ահարոնի մեջ, Սաղմ. 99:6ա (ելիցում և անապատի դեզերման շրջանում)
4. Սամուելի մեջ, Սաղմ. 99:6բ (Միացյալ Միապետություն)
5. Նրա օրենքում, Սաղմ. 99:7բ,գ (Ելից 19-20)
6. Նրա սուրբ լեռը, Սաղմ. 99:9բ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ

❖ «Նրա ոտքերի պատվանդանին» Տես Սաղմ. 99:1բ-ի գրառումը՝ եռակի կիրառության համար: «Դողալ» ԲԱՅԸ (BDB 919) նման է «ոտքերի պատվանդան» ԳՈՅԱԿԱՆԻՆ (BDB 919): Հնարավոր է սա լինի բացման և ավարտի ձայնախաղ:

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 99:6-9

**⁶Մովսեսն ու Վհարոնը Նրա քահանաների մեջ էին,
Սամուելը՝ Նրա անունը կանչողների,
Նրանք ՏԻՐՈՉԸ կանչեցին, ու Նա պատասխանեց նրանց:
⁷Ամպի սյան միջից խոսեց նրանց հետ .
Նրանք պահեցին Նրա վկայություններն
Ու այն պատվիրանը, որ տվեց իրենց:
⁸Դու պատասխանեցիր, ո՛վ մեր ՏԵՐ Աստված .
Դու ներող Աստված էիր նրանց համար,
Թեև վրեժխնդիր եղար նրանց արարքների համար:
⁹Մեծարեցե՛ք մեր ՏԵՐ Աստծուն ու երկրպագեցե՛ք
Նրա սուրբ լեռան վրա .
Քանի որ ՏԵՐԸ՝ մեր Աստվածը, սուրբ է:**

99:6-9 Այս պարբերությունը պարփակում է ելիցի, անապատի դեգերման, նվաճման և միապետության հաստատման շրջանը: ՅԱՀՎԵՆ բարեգթորեն հայտնում է Իրեն և Իր նպատակները Իսրայելի առաջնորդներին (տես՝ Մատթ. 5:17-19): Ինչպիսի՛ օրհնություն է, ինչպիսի՛ սքանչելի պատասխանատվություն:

99:6 «Նրա անունը կանչողների մեջ» Սա մատնանշում է տանարում՝ խորանում երկրպագության գործողություն (տես՝ Հովել 2:32): ՆԿ-ում սա դառնում է առանցքային գաղափար (տես՝ Գործք 2:21, Հռոմ. 10:9-13, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Ի՞նչ է նշանակում «Ընդունել», «Հավատալ», «Խոստովանել՝ լրավանել» և «Կանչել»): Երեմ. 33:3-ում սա նկատի ունի աղոթքը (այսինքն՝ անձնական փոխհարաբերությունը, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»):

Ուշադրություն դարձրե՛ք, որ նրանք կանչեցին և ՅԱՀՎԵՆ պատասխանեց (Սաղմ. 99:8ա):

99:7 «Ամպի սյուն» Սա նկատի ունի հատուկ ամպ («սյուն», BDB 765), որը ներկայացնում էր ՅԱՀՎԵԻ անձնական ներկայությունը, որն առաջնորդեց և պաշտպանեց երրայեցի ստրուկներին, մինչ նրանք հեռացան Եգիպտոսից և դեգերեցին անապատում (տես՝ Ելից 13:21-22, 14:19-24, 33:9, 10, 2 Օրին. 1:33, Նեեմ. 9:12, 19, Սաղմ. 78:14, 105:39):

Այս ամպը՝ սյունը, անհետացավ այն բանից հետո, երբ իսրայելացիները անցան Հորդանան գետի վրայով Խոստացյալ Երկիրը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՄՊԵՐՈՎ ՎԵՐԱԴԱՐՁԸ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՇԵՒԻՆԱ

❖ «վկայությունները . . . պատվիրանը» Ուշադրություն դարձրե՛ք, որ շեշտադրությունը ուխտի հնազանդության վրա է: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐ

❖ «**որ տվեց իրենց**» Համարը Աստծո ինքնահայտնության մասին է (այսինքն՝ «Նա խոսեց նրանց», «Նա տվեց նրանց») և Նրա ժողովրդի հնազանդությանը այդ հայտնությանը (տես՝ Սաղմ. 99:7բ, այսինքն՝ «նրանք պահեցին»):

Սաղմ. 99:7-ի «Իրենց» խոսքը կարծես թե վերաբերում է Մովսեսին (տես՝ Ելից 33:9) և Ահարոնին (տես՝ Թվոց 12:4-8): Այդուհանդերձ, հնարավոր է, որ սա վերաբերում է ամբողջ Իսրայելին (տես՝ Ելից 19-20):

Սա Քրիստոնեության, Հուդայականության ամենակենտրոնական հիմնահարցերից է: Ինչպե՞ս է միակ ճշմարիտ Աստվածը հայտնել Իրեն:

1. ստեղծագործության մեջ
2. խոստումների մեջ
3. գործողությունների մեջ
4. #1-3 արձանագրված են ՀԿ-ում
5. Իր Որդու մեջ
6. #5 արձանագրել է դրանք ՆԿ-ում

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԵՐԸ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԵՐՇՆՉԱՆՔ

Տե՛ս առցանց տեղադրված չորս տեսանյութ քարոզները www.freebiblecommentary.org Ներածական Պարբերության մեջ, առաջնային էջում:

1. Ինչո՞ւ եմ վստահում ՀԿ-ին
2. Ինչո՞ւ եմ վստահում ՆԿ-ին
3. Արդյո՞ք Քրիստոնեությունը ճիշտ է
4. Աստվածաշնչի վստահելիությունը՝ արժանահավատությունը

99:8 «Դու պատասխանեցիր» Սա առնչվում է աղոթքի հարցի հետ: Ես ունեմ երեք Հատուկ Թեմաներ (տես ստորև), որոնք անդրադառնում են այս հարցին: «Իրենց» խոսքը հետևում է Սաղմոս 99:6-ում «նրանք» խոսքի կիրառությանը: Երկուսն էլ վերաբերում են Մովսեսի, Ահարոնի և Սամուելի՝ ՀԿ-ի մեծագույն բարեխոսների քահանայական աղոթքին (տես՝ Երեմ. 15:1):

1. Մովսես – Ելից 32:9-14, 31-32, Թվոց 14:13-19, 21.; 2 Օրինաց 9:18-20, 25-29, Սաղմ. 106:23
2. Սամուել – 1 Թագ. 7:5,8-9, 12:19,23

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՉԴԵՑԻԿ ԱՂՈՌՔ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԽՈՍԱԿԱՆ ԱՂՈՌՔ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՂՈՌՔ՝ ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ, ՄԻՆՉԴԵՌ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ

Աստծո պատասխանը երկու տեսքով էր՝

1. ներման (այսինքն՝ Ելից 34:6-7, Թվոց 14:17-19, Նեեմ. 9:17, Սաղմ. 78:38, 86:15, 103:6-14, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ (ՀԿ))
2. նրանց չար գործերի վրիժառուն (այսինքն՝ Ելից 32:28, Թվոց 20:12, Սաղմ. 95:11, 107:12, այսինքն՝ ՅԱՀՎԵԻ պատեց թե՛ Մովսեսին և թե՛ Ահարոնին):

Մրանք իրար հետ սերտորեն կապված են հնազանդության (տես՝ Սաղմ. 99:7բ) պատճառով: Դատաստանը թե՛ պատժելի է (այսինքն՝ գերությունը) և թե՛ փրկակար (տես՝ Եբր. 12:5-13): NIDOTTE, հատոր 3, էջ՝ 155, տալիս է հրաշալի սահմանում՝ «ներումը և վրեժը, օրենքը և շնորհքը, սերը և բարկությունը ՅԱՀՎԵԻ մեջ հակադրություններ չեն»: Դրանք արտացոլում են շնորհքի ուխտի լարվածությունը՝ մարդկային պատասխանի պահանջներով: «Հատուցում» բառի ամբողջական քննարկման համար տես՝ NIDOTTE, հատոր 4, էջ՝ 1140-1149:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ

99:9 NJB Սաղմ. 99:9 ներկայացնում է որպես առանձին պարբերություն, և հնարավոր է պատճառն այն է, որ այն անցում է կատարում երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻ, որոնք ուղղված են Իսրայելին:

1. մեծարեցե՛ք մեր ՏԵՐ Աստծուն – BDB 926, KB 1202, *Polel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 99:5
2. երկրպագեցե՛ք Նրա սուրբ լեռան վրա (այսինքն՝ տաճարը) – BDB 1005, KB 295, *Hishtaphel*, տես՝ Սաղմ. 99:5:

Այդուհանդերձ, նկատեք առաջին պարբերության դիտավորյալ կառուցվածքը, որոնք ավարտվում են այս նույն ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ (Սաղմ. 99:5) և ապա երկրորդ պարբերության մեջ՝

ավարտվում են միևնույն ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ: Հիշե՛ք, պարբերության բաժանումները ներշնչված չեն: Հանախ արդի արևմտյան ժողովուրդները այնպես են վերլուծում ՀԿ-յան այս պոեզիան, որ դրանք արտացոլում են մեր մշակույթը և գրական ձևաչափերը և ոչ թե ՀՄԱ-ի և հնագույն եբրայական ձևաչափերը: Հատկապես այս համարը հնարավոր է ճիշտ է ուզարտական ձևաչափերի համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵԲՐԱՅԵՐԵՆ ՊՈՆԶԻԱՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

❖ «**քանի որ ՏԵՐԸ՝ մեր Աստվածը, սուրբ է**» նմանատիպ մի արտահայտություն փակում է Սաղմ .99:5-ը:

Մի քանի անգլերեն թարգմանություններ այս արտահայտության եռակի կրկնությունը դիտարկում են (տես՝ Սաղմ .99:3,5,9) որպես հեղինակի կողմից այս Սաղմուսը երեք պարբերությունների բաժանելու կերպ (տես՝ NKJV, TEV): JPSOA ունի չորս պարբերություն (Սաղմ .99:1-3, 4-5, 6-8, 9):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Նկարագրե՛ք ուխտի տապանակի կարևորությունը:
2. Արդյո՞ք այս Սաղմուսը նախորդների պես ունի ընդհանրական տարր:
3. Արդյո՞ք Սաղմ .99:4-ը խոսում է կատարյալ Դավթի սերնդից դուրս եկող թագավորի կամ հենց ՅԱՀՎԵԻ մասին:
4. Ինչո՞ւ են Մովսեսը, Ահարոնը և Սամուելը նշվում Սաղմ .99:6-ում:
5. Ինչպե՞ս կարող է ՅԱՀՎԵՆ լինել թե՛ ներող և թե՛ վրեժ լուծող: